ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՀՈՒԹՅՈՒՆ

Ս/թ. փետրվարին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արևմտյան Գերմանիայի հոգևոր հովիվ Տ. Հակոբ արեղա Գրլբենճյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց մի ուսումնասիրություն՝ «Աստուծո հայտնությունը իր բարդույթներով» վերնագրով՝ վարդապետական աստիճան ստանալու համար:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը, բաղկացած Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանից (նախագահ), հոգևոր ճեմարանի դասախոսներ Տ. Անանիա վրդ. Արաբաջյանից և Պարգև Ծահբազյանից, քննելով Տ. Հակոբ արեղայի ներկայացրած վարդապետական թեզը, աշխատանքը գնահատեց բավարար և թույլատրեց հեղինակին հանդես գալու բանավոր պաշտպանությամբ, որը տեղի ունեցավ փետրվարի 27-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, միաբանական հերթական հավաքույթի ընթացքում:

Բանավոր պաշտպանության ժամանակ հայր սուրբը փայլուն կերպով ներկայացրեց իր աշխատանքը և ապա պատասխանեց հանձնաժողովի տված մի շարք հարցերի: Հանձնաժողովը դրական գնահատեց բանավոր պաշտպանությունը ևս և միջնորդեց Վեհափառ Հայրապետին՝ Տ. Հակոբ արեղա Գրլբենճյանին վարդապետական աստիճան շնորհելու համար: Այնուհետև Վեհափառ Հայրապետը օրհնության և գնահատանքի խոսքով շնորհավորեց հայր սուր-

Հ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ—ՀԻՍՈՒՍԻ ԵՐԵՎՈՒՄԸ ԾՈՎԻ ՎՐԱ

բին և մաղթեց նրան նորանոր հաջողություններ՝ իր հովվական ու ուսումնական ասպարեզներում:

Մարտի 1-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 12-ին, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արսեն եպս. Բերբերյանը վարդապետական մասնավոր գավազան կրելու իրավունք շնորհեց Տ. Հակոբ աբղ. Գըլընճյանին:

Նույն օրը Նորին Սրբությունը հայրական ջերմ սիրով ընդունեց Տ. Հակոբ վարդապետին և նրան պարգևատրեց վարդապետական լանջախաչով:

Տ. ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԸԼԸՆՃՅԱՆ

Ավազանի անունով՝ Հակոբ: Ծնվել է 1955 թվականին Քեսապ (Սիրիա) գյուղաքաղաքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի «Ուսումնասիրաց միացյալ վարժարան»-ում: 1968—1972 թվականներին սովորել է Անթիլիասի դպրեվանքում: 1973 թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որի լսարանական բաժինը ավարտել է 1976 թ. մայիսին՝ փայլուն հաջողությամբ: Ավարտաճառի թեման եղել է «Եկեղեցական կանոններն ու պաշտամունքը», որը պաշտպանել է 1976 թ. մայիսին «Գերազանց» գնահատականով:

1974 թվականի դեկտեմբերին ձեռնադրվել է սարկավագ: 1975—1977 թթ. աշխատել է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես քարտուղար:

1976 թվականի նոյեմբերի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1977 թվականի հունիսին, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Հակոբ աբղ. Գըլընճյանը մեկնել է Արևմտյան Գերմանիա՝ կատարելագործելու իր աստվածաբանական ուսումը և միաժամանակ հոգալու տեղի հայկական համայնքների հոգևոր կարիքները:

1978 թվականի աշնանը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի հաստատումով, նշանակվել է Արևմտյան Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ: Գերմաներեն լեզվի մեջ առաջադիմության համար Տ. Հակոբ վարդապետը ստացել է Ռեգենսբուրգի համալսարանի Գերմաներեն լեզվի վկայական:

Շնորհավորում ենք Տ. Հակոբ վարդապետին սույն շնորհաբաշխական առիթով և նրան ցանկանում լավագույն հաջողություններ իր ուսումնառական և հովվական աշխատանքներում:

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ